ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության փորձագետ Ստյոպա Ավետիսյանի

Ես՝ Ստյոպա Ավետիսյանս, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2024 թվականի հունիսի 25-ին կնքված N 35 պայմանագրի համաձայն:

2024 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ ֆինանսների նախարարի 2024թ. նոյեմբերի 1-ի N 38-Ա և նոյեմբերի 1-ի N 39-Ա հանձնարարագրերի համաձայն ընդգրկվել եմ համապատասխան տնտեսվարող սուբյեկտներում նշանակված հանդիպակաց ստուգման խմբերի կազմում և ստուգմամբ առաջադրված հարցերի շրջանակներում իրականացրել շինարարական աշխատանքների փաստացի ծավալների չափագրման և տեղազննման, շինարարական աշխատանքների վերաբերյալ կնքված պայմանագրերի կատարման ճշտության ստուգում:
2. Մասնակցել եմ ստուգումների արդյունքներով ստուգման ակտերի, զեկուցագրերի, գրությունների, տեղեկանքների կազմման աշխատանքներին և համապատասխանաբար առաջարկություններ ներկայացրել ստուգվող կազմակերպություններում արձանագրված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ:
3. Ապահովել եմ վարչության պետի կողմից տրված ընթացիկ հանձնարարականների կատարումը:

Ֆինանսաբյուջետային վերահսկողության
վարչության փորձագետ Ստյոպա Ավետիսյան

30.12.2024թ.